

## ՔՐԻՍՏՈՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ

### Յարական Ոստիկանության Դեպարտամենտի Հատուկ բաժնի 1905 թվականի թղթածրարը

«Նրա տունը միշտ բաց էր և մշտապես այցելու ժողովրդով լցված, որը գնում էր այնտեղ այնպես, ինչպես եկեղեցի են գնում աղոքքի»:

Քր. Միքայելյանի նահատակության  
առիթով ՀՅԴ Արևելյան Բյուրոյի 1905թ.  
մարտի 13-ի վրացերեն թուղթիկից

Քրիստոփոր Միքայելյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ ժամանակն լույս են տեսել բազմաթիվ հիշողություններ<sup>1</sup>, նամակներ<sup>2</sup>, իսկ վերջին տարիներին նաև՝ արխիվային փաստաթղթեր<sup>3</sup>: Բայց ներկայացվող վավերագրերի թղթածրարը ոչ միայն լրացնում, այլև նկատելիորեն ընդլայնում ու բարձացնում է ՀՅԴ Դաշնակցության հիմնադիրներից մեկի ու ամենաճանաչված առաջնորդի մասին առկա գիտելիքներն ու պատկերացումները: Պատճառն այն է, որ մենք գործ ունենք ցարական Ոստիկանության Դեպարտամենտի կուտակած փաստաթղթերի լայն հենքի վրա հիմնված՝ ամփոփիչ, համահավաք ժողովածուի հետ:

Քրիստոփոր Միքայելյանի նահատակությունից հետո՝ 1905 թվականի ընթացքում, Ոստիկանության Դեպարտամենտի Հատուկ բաժնում հավաքվել ու անփոփվել են 1890-ականներից ՀՅԴ առաջնորդի վերաբերյալ Կովկասի կառավարչապետի, Թիֆլիսի ու Բաքվի նահանգապատերի գրասենյակներում և Ժանդարմական վարչություններում կուտակված ու հետագա տարիներին հարատացված նյութերը: Ստեղծվել է վավերագրերի մի հարուստ ժողովածու, որը բաղկացած է ցարական Ո-ուսաստանի զանազան պետական մարմինների կողմից ժամանակին Ոստիկանության Դեպարտամենտի տրամադրության տակ դրված գեկուցագրերի ու թղթածրարների առանձին հատվածներից, և բազմաթիվ նորահայտ ու հետաքրքրական փաստաթղթերից: Այսինքն՝ սա ցարական Ո-ուսաստանի պետական մար-

\* Այս կարևոր թղթածրարի հրապարակումը նվիրում ենք Քրիստոփոր Միքայելյանի ծննդյան 150-ամյակին: Խնդր.: Ընդունվել է տպագրության 12.11.09.

1 Տես Քրիստոփորի յիշատակին, Կ. Պոլիս, հրատ. 3.3. Դաշնակցութեան, 1909:

2 Տես Քրիստոփոր Միքայելյանի նամակները, հրատ. 3.3. Դաշնակցութեան, Խնդր. Յրաշ Տասնապետեան, Պեյրուր, 1993:

3 Տես Գևորգ Խուլինյան, Նորահայտ վավերագրեր ՀՅԴ Դաշնակցության հիմնադիրների (Քրիստոփոր Միքայելյան, Սիմոն Զավարյան, Ռոստոն) 1890-ական թվականների գործունեության մասին, «Բանբեր Դայաստանի արխիվների», 2003, թի. 1, էջ 15-26:

միններում կուտակված հարուստ նյութերի համադրությունն ու ամփոփումն է՝ Վի-  
տոշի լանջին ՀՅԴ առաջնորդի նահատակությունից անմիջապես հետո:

Նման ներքին հետաքննության կազմակերպումը վկայում էր իր կյանքին  
արդեն հրաժեշտ տված Քրիստովոր Սիրայելյանի անձի ու գործի հանդեպ ցա-  
րական Օխրանայի Էլ ավելի ուժեղացած հետաքրքրության մասին: Թեև ՀՅԴ-  
առաջնորդը ֆիզիկապես այլս չկար, սակայն նրանով շարունակում էր զբաղվել  
մի ողջ կայսրության պետական ապարատը, որովհետև Կովկասի մայրաքաղաք  
Թիֆլիսում և այլ բնակավայրերում ՀՅ Դաշնակցության կազմակերպած սգո  
արարողությունները մեծ հետաքրքրություն էին ստեղծում Քրիստովոր Սիրայել-  
յան մարդու և քաղաքական գործչի հանդեպ: Անհրաժեշտություն էր առաջացել  
պարզել, թե ո՞վ էր այն «Հայ Քրիստովոր Սիրայելյանցը», «Սիրայիանցը», կամ՝  
«Սիրայանցը», որի բարձ հիշատակը խնկարկում է մի ողջ ժողովուրդ:

Ըստ այդի հրապարակվող թղթաձրարը առանձնահաստուկ է մի քանի առումով:

**Առաջին**, սա «հետմահու հետաքննություն» է, ինչը պայմանավորված է նրա-  
նով, որ Բուլղարիայում գոհված Քրիստովոր Սիրայելյանի գործը շարունակվում  
էր նրա նահատակությունից հետո՝ ողջ Կովկասը ցնցող ՀՅ Դաշնակցության հե-  
ղափոխական պայքարի տեսրով:

**Երկրորդ**, սա ներքին հետաքննություն է, այսինքն՝ նախորդ տարիներին Ոս-  
տիկանության Դեպարտամենտում քաղաքական գործերի քննությամբ զբաղվող  
հիմնական օղակի՝ 3-րդ բաժանմունքի միջոցով Քրիստովոր Սիրայելյանի մա-  
սսին կուտակած առավել կարևոր տեղեկությունների մատուցումն այդ շարագուշ-  
ակ հաստատության Հատուկ բաժնին: Դրանց մի մասը հանառոտ քաղվածքներ  
են՝ նախորդ շրջանում կատարված հետաքննություններից, մյուսները՝ ամբողջա-  
կան փաստաթղթեր: Բնական է, որ այդ ամենին գումարվել են նաև վերջին պահին  
Թիֆլիսից ստացված թարմ տեղեկությունները՝ Քրիստովոր Սիրայելյանի մահ-  
վան կապակցությամբ ՀՅԴ կազմակերպած սգո արարողությունների մասին:

**Երրորդ**, սա Ոստիկանության Դեպարտամենտի կողմից հավաքած ու բազ-  
մից ստուգված թերևս ամենածշգրիտ տեղեկությունների ամփոփումն է, քանի  
Հատուկ բաժնի փաստաթղթերում շարադրվում էր այն ամենը, ինչին ի գորու էր  
տեղեկանալ միայն կայսրության բարձրագույն դեկավարությունը:

Այսպիսով, մենք գործ ունենք իր բնույթով եզակի փաստաթղթերի ժողովածուի  
հետ, որը ԽՍՀՄ-ի գոյության շրջանում՝ 1967 թվականին Ոստիկանության  
Դեպարտամենտի կենտրոնական մարմինների արխիվներն ամփոփող՝ ՀՀԿտեմ-  
բերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական  
պետական արխիվում (ք. Մոսկվա) փոտոպատճենի է վերածել, այսինքն՝ լուսան-  
կարել ու տեղափոխել է ժապավենի վրա ԽՍՀՄ Մինիստրների Սովետի Գլխա-  
վոր արխիվային վարչության միկրոֆոտոլաբորատորիայի աշխատակից Տարաս-  
կինան: Նոյն շրջանում նշված արխիվից, այժմ՝ Ռուսաստանի Դաշնության  
պետական արխիվ, փոտոպապավենը տեղափոխվել է Երևան ու պահվել Հայա-  
ստանի ազգային արխիվի Հավաքածուների ֆոնդում, որն ամփոփում է նախկին  
ԽՍՀՄ-ի տարբեր քաղաքներից ստացված՝ Հայաստանին ու հայերին վերաբերող  
փաստաթղթերի փոտոպատճենները:

Տարիներ առաջ մենք ամբողջովին արտագրել ենք Մոսկվայից ստացված այդ  
ծավալուն և դժվարներնելի փոտոպատճենը: Ներկա հրապարակումը պատ-  
րաստելու ընթացքում փորձելով ՀԱԱ Հավաքածուների ֆոնդից կրկին պատվիրել  
նոյն ժապավենը՝ պարզեցինք, որ այն այլս իր տեղում չէ: Հուսանք, որ կորուստը

Ժամանակավոր անփութության արդյունք է, բայց կարևոր այն է, որ այս եզակի ֆոտոժապավենի պարունակությունը փրկվել է նոռացությունից և հրապարակվում է իր ամբողջական տեսքով: Դա հնարավորություն կտա ո՞չ միայն օգտվել հրապարակվող փաստաթղթերում առկա կոնկրետ նյութերից, այլև Մուսկվայում գտնվող Ռուսաստանի Դաշնության պետական արխիվում հայտնաբերել ժապավենի թղթային բնօրինակը: Ավելին, նրանում նշվող Ռուսիկանության Դեպարտամենտի կազմած գործերի կոնկրետ համարների միջոցով հնարավոր է գտնել նաև այն փաստաթղթերը, որոնց թվական տվյալները բերված են Հատուկ քաժնի այս ամփոփ թղթաձրարում:

Սույն հրապարակման մեջ ներկայացվող՝ 34 թերթից բաղկացած ֆոտոպատճենում առկա փաստաթղթերի մեծագույն մասը տպագրվում է առաջին անգամ: Միայն առաջին երեք թերթերից ոչ մեծ մեջբերումներ են արվել մինչ օրս լույս տեսած ընդամենը մեկ աշխատության մեջ<sup>4</sup>:

*Հասմիկ Ա. Համբարձումյան*

## Summary

### IN THE FOOTSTEPS OF CHRISTAPOR MICHAELYAN

The file of 1905 of the Police Department's Special Division

*Hasmik A.Hambardzumyan*

4 Տես Գևորգ Խուդինյան, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն, Եր., 2006, էջ 163, 177, 184, 198: Վերջում ցանկանում են շնորհակալություն հայտնել «Թրիստակիր Սիրայելան». կյանքը գործունեությունը, աշխարհայացքը» ատենախոսության գիտական դեկավար, պատմական գիտությունների դոկտոր Գևորգ Խուդինյանին, որի համար պահանջով՝ ժամանակին կարողացա արտագրել ու թերև նաև ամենաացումն փրկել Ռուսիկանության Դեպարտամենտի Հատուկ քաժնի այս ընդարձակ թղթաձրարի ֆոտոպատճենը:

Ն 594

Հատուկ բաժին

**ԳՈՐԾ**  
**Ոստիկանության Դեպարտամենտի**  
**գործավարության**

**ՀԱՅ ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԿՐՏԻՉԻ (ՆԻԿԻՏԻՆ)**  
**ՄԻՔԱՅԵԼՅԱՑԻ (ՄԻՔԱԼԻԱՑԻ)**  
**ՄԱՍԻՆ**

Ակիզը՝ 1898 թ.

Վերջ՝ 189\_ թ.

Մտ. N 17887 Տեղեկանքը կազմելու ժամանակը «24» հոկտ. 1895 թ.	Կովկ. 8933 Տեղեկանք 3-րդ գործավարության	Գործ N 18__ թ.
Ազգանուն, անուն, հայրանուն	Սիրայելյանց Քրիստովոր Սկրտիչի (Նիկիտին)	Գործեր, որոնց հիման վրա կազմված է տեղեկանք
Կոչումը և ծագումը	Երևանի նախանձի Նախիջևանի գավառի Ազուլիս գյուղի բնակիչ	
Դավանանքը	Հայ- Գրիգորյան	
Ծննդյան թիվը և տեղը		
Բնակության վայրը	թ. Թիֆլիս	
Դաստիարակության վայրը (միջնակարգ և բարձրագույն)	Թիֆլիսի Ալեքսանդրյան Ուսուցչական ինստիտուտ	
Զբաղմունքները և ապրուստի միջոցները		
Գտնվու՞մ է ոստիկանության գաղտնի հսկողության տակ և սահմանափակված չէ՝ արդյոք բնակավայր ընտրելու իրավունքի մեջ		
Ընտանեկան դրույթունը և ազգակցական կապերը	սպանվել է 1905 թ. մարտի 17-ին Կայաժմույթ (Թուլ.) պայթյունի արդյունքում	

## 1890 թ., էջ 378 (Թերթ 2)

Ոստիկանության ‘Նեպարտամենտում գաղտնի որոնումների միջոցով ստուգվել է ոստիկանության գաղտնի հսկողության տակ գտնվող ազնվականութիւն Եվգենիա Կոստանտինովնա Լավրուսիչից՝ կողմից (ծնունդով՝ Քարոշկինա) 1890 թ. ապրիլի 6-ին Թիֆլիսից գրված նամակն իր նախկին ամուսնուն՝ Միհայիլ Կոնդրատու Լավրուսիչին<sup>5</sup>, որում, խոսելով հարմար գրադառներ փնտրելու անհնարինության պատճառով Թիֆլիսից այլ քաղաք բնակության տեղափոխվելու իր մտադրության մասին, նախմիջի այլոց հայտնել հետևյալը. «Եվ զուտ իմ անձնական տեսանկյունով ևս ինձ համար իմաստ չունի այստեղ քարշ գալ. Քրիստովոր Ազուլիսում է և հավամարար այնտեղ կմնա նաև հաջորդ ձմռանը»:

## 1890 թ., էջ 607 (Թերթ 2)

Հովհանի 15-ին Եվգենիա Լավրուսիչը հայտնում էր իր ամուսնուն. «Չարաք օրը՝ 7-ին, եկավ Ծրիստափորը և տեղափորեց Արշակի<sup>6</sup> մոտ: Ծրիստափորն աշնանը նորից մեկնում է Ազուլիս, – դրանով արդեն շատ բան է ասված»:

## 1890 թ., էջ 647 (Թերթ 2)

1890 թ. օգոստոսի 15-ին Լավրուսիչը ամուսնուն գրել է հետևյալը.

«Քրիստովորի ընկերները գրեթե պարտավորեցրել են մնալ Թիֆլիսում, 5 Եվգենիա Կոստանտինովնա Լավրուսիչ-Քարոշկինան Սիրիք և ապա՝ Թիֆլիսի արսորված ոռու հեղափոխական նարոդին էր: Նա 1889 թվականին սիրահարվում է Թիֆլիսափոր Սիրայելյանի, որից հետո իր ընկերոց Սիրայիլ Լավրուսիչը ընտանիքը ջայրացնելու համար Թիֆլիսում գործում է ապահովագործ կիրա ինքն է ապահովագործ պահանջում անունում: Եղր 1890 թ. հուլիսի սկզբնից՝ 7 հինգ ժողովներուն նախօրենի, իր ընկերների պահանջուղ թր. Սիրայելյանը վերադառնում է Թիֆլիս, Եվգենիա Կոստանտինովնան արդեն պարտադրել էր իր ամուսնուն հետանալ Կիւ: Ավելի մանրամասն տես Սիրայ Զաւարեան, Սի դրագ Քրիստովորի ընտանեկան կեանքից, «Քրիստովորի յիշատակին», Կ. Պոլիս, 1909, էջ 27:

6 Լավրուսիչ Միհայիլ Կոնդրատիի-ռուս հեռափոխական նարոդինկի: Այդ շրջանում արդեն բնակվում էր Կիւնում, ինչ 1893 թվականին թր. Սիրայելյանի խմբանքով փորձում է ՀՅԴ-ի համար գենք ձեռք բերել Տուլյայի գինագրծարանից, որի համար ծերբակալվում է դառնալով հայկական դասի համար բանտարկված առաջին օտարազգի:

7 Արշակը – նույն ինքը՝ Արշակ Տեր-Գրիգորյան, - հայ ազգային նարոդինկի, ՀՅԴ հիմնադիր ժողովների մասնակից:

8 Սուսաննա Քանանովան (Քանանյան) Լազարյան ճեմարանի ռեկտոր Գևորգ Քանանյանի դուստրն էր, ինչ մոր կողմից՝ Թիֆլիսում բնակվող Ստեփան Ղամբարյանի բոոր, որի ընդարձակ տանը բնակվում էր նոր փեսան, Շովիաննես Խաստիյանը Կոստանդին և Ալեքսանդր Խաստիյանների հայրը:

9 Պորֆերով Յուրի (Գեորգի) Ղամբարյանը (1850-1926) Ստեփան Ղամբարյանի որդին էր, այսինքն՝ Սուսաննա Քանանյանի եղբայր: Նա և սերտ կապու ուներ թր. Սիրայելյանի հետ: Դասավանդել է Սոսկայի և Բյուլետելի համարաներուն, իսկ 1906 թվականից Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչն էր:

բայց Ազուլիսի հասարակության առջև նա պարտականություններ ունի, որոնք անտեսել բացարձակապես չի ցանկանում: Սակայն նկատի ունենալով, որ այստեղ գործն ավելի լայն է ու ծավալուն (իսկ թե ինչ գործ է դա, ես կրացատրեմ թեզ նամակով, որը կուտարեկեմ Սեմիբրրատովսայի հետ, իմաս այդ մասին հարմար չէ գրել), և նրան այստեղ ոչ ոք չի կարող փոխարինել, նա որոշել է մնալ այստեղ, բայց մտածում է մեկ-երկու ամսով գնալ Ազուլիս, որպեսզի այնտեղ ինչ-ինչ գործեր կարգավորի և հասցնի իր փոխարեն այլ մարդու նշանակել: Այստեղ այնպիսի լարված ժամանակներ են, որ յուրաքանչյուր օր կարող ենք սպասել ինչ-ոք սարսափելի նորությունների և իրադարձությունների: Ամեն դեպքում դժվար թե կարելի է դեպքերի խաղաղ ընթացք ակնկալել»:

## 1890 թ., էջ 650

## (Թերթ 2-3)

Սուսաննա Քանանովան<sup>8</sup> 1890 թ. օգոստոսի 24-ին Թիֆլիսից իր քեռուն՝ Սոնկվայի համալսարանի պրոֆեսոր Յուրի Ստեփանով Գամբարովին<sup>9</sup> հայտնում էր հետևյալը. «Սիրայելյանցը՝ Ազուլիսի դպրոցի տեսուչը, Թիֆլիսում միանգամայն հստակ կերպով ինձ ներկայացրեց այստեղի բոլոր խմբակցությունները, խոսեց դրանց մասին առանց որևէ խորիրդավորության, միանգամայն պարզ և հստակ՝ շվախենալով որևէ հետևանքից: Նրա կողմից գործի նկարագրություն հետո, ինձ մոտ էլ ավելի ցանկություն առաջացավ, որքան հնարավոր է շուտ ծանրության գործի բոլոր խմբակցություններուն առաջանալ կամ ամսունուն հետանալ Կիւ: Ավելի մանրամասն կեանքից, «Քրիստովորի յիշատակին», Կ. Պոլիս, 1909, էջ 27:

լր մանրամասնությունների, նրա մասնակիցների և մասնակցուհիների հետ, շանկացան նրանում հնարավորին չափ ջերմ մասնակցություն ունենալ: Արյունուտ տեսարանները, ամենոր տեղի ունեցող ապստամբությունները, խրստումները, բոյլ չեին տախու ինձ զիշերները հանգիստ քննել: Այսքան բարի նպատակների համար գումարներն այնքան անհրաժեշտ են, որ յուրաքանչյոր ազատ կոպեն ցանկանում են այնտեղ հանձնել»:

**1889 թ., գ. 1061, մ. 2**

**մտ. 11015**

**(Թերթ 3-4)**

Արքած հարցմանն ի պատասխան՝ Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետը 1890 թ. սեպտեմբերի 27-ի N 463 գրությամբ տեղեկացրեց, որ Անդրկովկասյան երկարգծի վարչությունում ծառայող Եվգենիա Լավրուսիչը նելացի կիմ է, հետևողական սոցիալիստ է, փայլուն կերպով տեղյակ է ընդհատակյա ազիտացիայի հնարքներին, և նրա ծանոթների ներ շրջանակին են պատկանում. ոստիկանության հաստուկ հսկողության տակ գտնվող Յակով Աֆանասև Դանկոն իր կոնց՝ Մարիայի հետ, հեռագրավարուիի Սելյանյա Գրաժդանկանան և 1890 թ. ամսանը Ազգության ժամանած քրիստ. Սիրայիանցը, որի հետ Լավրուսիչը գտնվում է մտերմիկակապի մեջ: Գեներալ-մայոր Յանկովսկու կարծիքով՝ Սիրայիանցի գործելակերպը «քերում է նրա լիակատար քաղաքական անբարեհուստության մասին համոզմանը»: Նա Երևանի նահանգի, Նախիջևանի զավարի Ազուլիս գյուղի բնակիչ է, Թիֆլիսի Ակերասիլյան ուսուցչական ինստիտուտի գիտությունների դասընթացն ավարտելուց հետո գնացել է Ռուսաստան՝ բարձրագրված կրթություն ստանալու համար, վերադառնալով այնտեղից, Թիֆլիսում որոշ ժամանակ ապրել է առանց որոշակի գրադանունների. իսկ հետո ստանձնել է Ազուլիսի ծխական դպրոցի պահապատճենը: 1890 թ. հունվարի վերջին կամ փետրվարի սկզբին նա Թիֆլիսից մեկնել է Ազուլիս՝ մտադրվելով

այնտեղ մնալ երկար ժամանակ:

Անուանը վերադառնալով Ազուլիսից, նա սկզբում բնակվել է «Յուժնին նումերա» հյուրանոցին մոտ գտնվող քաղամասում, որտեղ ապրում էր Լավրուսիչը, բայց քանի որ այդ ժամանակ վերջինին նկատմամբ զաղտնի հսկողություն էր իրականացվում, նա, հավանաբար գուշանալով հայտնաբերվելուց, տեղափոխվել է այլ բնակարան՝ Նաբերեժնայա փողոցի Ենինովին պատկանող N 32 տուն, որը նոյնպես երեք օրից լրել է, իսկ հետո հայտնի չե որտեղ է ապրել, ընդ որում պարզվել է միայն, որ նա շատ հաճախ գալիս էր զիշերելու ժառանգական պատվավոր քաղաքացի Արշակ Իվանով Տեր-Գրիգորյանցի մոտ: Իրեն լավ ծանոթ Վարտանես Պապայանցի միջնորդությամբ Սիրայիանցը աշխատակցի տեղ ստացավ հայկական «Մշակ» թերթում: Լավրուսիչի և Սիրայիանցի այլ ծանոթների բվին են պատկանում. իրեռի Ուահս Լեսիտեաը, Նինա Սիրայլովա Սեմիբրատովան, Մարիա Բաքրածեն, Նաշվալովան, Եվգենիա Կարպուխովան, քաղաքական հանցագործ Նիկուլինի քոյրը և ոմն Վասիլեա, որը գեներալ-մայոր Յանկովսկու կարծիքով՝ «յորանասունական թվականների սկզբին «նարողնիկների» խմբակցությանը պատկանող մութ անցյալով անձնափորտություն է»: Այդ բոլոր անձինք՝ Լավրուսիչի դեկապարությամբ, քիմիա էին պարագում մոտ ապագայում մանկաբարձական դասընթացներ ընդունվելու համար: 1890 թ. գարնանը նշված խմբակը հավաքվում էր Բուսաբանական այգում, իսկ հուլիսի վերջից՝ Տեր-Գրիգորյանցի մոտ, որն ապրում էր քաղաքի հեռավոր, խոլ մասում: Սիրայիանցի գալուց հետո հավաքները տեղի էին ունենում մեկ նրա և Լավրուսիչի ընդհանուր բնակարանում, մեկ էլ առաջվանան Տեր-Գրիգորյանցի մոտ: Այս կամպանիայի մեջ էր պատվում նաև Թիֆլիսում գաղտնի հսկողության տակ գտնվող Եգոր Չերենկովը, որը խմբում կրում էր «Ֆեղյա» մականունը<sup>10</sup>:

10 Այս բազմազգ նարողնիկական խմբակը տեղատվություն ապրող նարողնիկական շարժման բեկորներից էր: Իսկ ահա «Կարտանես Պապայանցին» դժվար է միանշանակորեն կապել հայտնի գրողի անվան հետ, քանի որ թէ անց ննան անձնագրով Ուսմիշնիայում գործում էր Ուստոնը: Տես Գևորգ Խուսինյան, Նորահայտ վավերագրեր ՅՅ Դաշնակցության հիմնադիրների (Քրիստոնության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, թիւ 1, էջ 25-26:

1890 թ., էջ 906

## (Թերթ 4)

Վերոհիշյալ Սարիա Բաքրածեն 1890 թ. նոյեմբերի 4-ին Փարիզից հաղորդել է Եվգենիա Լավրուսիչին հետևյալը. «Քրիստովորի և Կ-ի գործունեության, ավելի ճիշտ՝ գործերի վիճակի մասին ընդհանրապես, որոնցում նրանք մասնակցություն են ունենում, ես այստեղ իմանում եմ այն նոյն Զարոյից<sup>11</sup>, որի մասին ես տեղեկացրել եմ, քանի որ հնարավոր չէ Թիֆլիսից ինչ-որ բան ստանալ: Հավանաբար չի կարելի գրել այդ մասին, ես դրանով մխիթարյուն եմ, որովհետև խնդրել էի Արշակին գրել: Ինձ հետաքրքրեց՝ ի՞նչ առարկա էր ուզում ուղարկել Քրիստովորը, թե՝ դրա մասին ել գրել չի կարելի: Հարգաճքներս հաղորդիր Զարինեային»:

1891 թ., գ. 180, մ. 1

1890 թ. – 922, 4-րդ գործ.

## (Թերթ 4-5)

Վերոհիշյալ Արշակ Տերգիզորյանցը 1890 թ. նոյեմբերի 14-ին Թիֆլիսից Փարիզ՝ Սարիա Բաքրածենին գրած նամակում տեղեկացնելով այն ոգևորության մասին, որով պատրաստվում են ժողովրդական ազատագրության գործին գավառում՝ Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում և, զանգատվելով հայկական շարժման թիֆլիսյան պարագուիսների անգործությունից, ի միջի այլոց գրում էր հետևյալը. «Երբեմն լինում եմ Քրիստովորի մոտ. նա Եվգենիա Լավրուսիչի հետ ապրում է, այսպես ասած, երգ ու պարով, Եվգենիան նոյնիսկ սկսել է սովորել հայերեն, հասկանալի է՝ ոչ թե գործի, այլ մարդու համար: Հիշեք իր իսկ բնակարանում նրա ճառքեր՝ հայրենափրության, կոսմոպլիտիզմի և այլ «իզմերի» մասին, գիտե՞՞ի ինչ, ես սիրում եմ, երբ մարդիկ ուղիղ են զնում և անում են այն, ինչն իրենք են զգում...»:

1890 թ., էջ 974

11 Հավանաբար Սարը, այսինքն Աղամիրզովը, որը հենց այդ ժամանակ Փարիզում էր: [Կարծում ենք, որ փաստարդի տողատակում առևս այս բացատրության մեջ Ոստիկանության Դեպարտամենտի Յատուկ բաժնը սխալվել է, քանի որ Սարիա Բաքրածեն ակնարկում էր ոչ թե հնչակյան Սարգիս Աղամիրզոյանի, այլ դաշնակցական Հովհաննես Զարարի Լոռու-Մելիքյանի մասին:]

12 Ուստի ազնվական տիկնոց այս անկերծ խոստովանության մեջ դժվար չէ նկատել Իվան Տուրգենևի «Նախօրենին» վեպի՝ բուլղար հեղափոխականին վրա սիրահարված հերոսուհու գաղափարների ազդեցությունը:

(Թերթ 5)

1890 թ. նոյեմբերի 24-ին Լավրուսիչը Կիև՝ Նինա Սեմիբրատովային գրում էր հետևյալը. «Քրիստովորը այն-այսի իրաշափ մարդ է, որ հնարավոր չէ նրան չսիրել: Նա կենանի գործի, աշխատանքի մարդ է, որոնք նրա հետ ինչ-որ մեկ ամբողջություն են կազմում, աշխատանք՝ հանուն զարափարների – դա նրա միս ու արյունն է: Նա վերին աստիճանի գործուն մարդ է և սերը մարդկանց նկատմամբ ու նրանց համար աշխատելու ցանկությունը նրա մոտ գերիշխում են մնացած ամեն ինչի հանդեպ: Մեզ մոտ փնտիքնացող մարդիկ շատ կան, շատ են խոտղները, շատ են նաև զբաղվողները, բայց շատ քիչ են իսկապես եղանակուն աշխատողները. նա պատկանում է այդ վերջին փոքրամասնությանը: Ես չեմ տարվել նրանով: Քրիստովորի սերն ինձ համար շատ մեծ բան է, և ես չգիտեմ, թե ինչպես կապրել առանց դրա: Բայց երկա՞՞ր է տևելու արդյոք այս երջանկությունը: Չե՞ որ դու գիտես, թե ինչ ժամանակներ են իհմա: Եթե ոչ այսօր, ապա վաղը նա կզնա աշխատանքների շրջապտույտի մեջ, մեծարիվ զոհեր են լինելու, շատ կյանքեր են խորտակվելու, իսկ նա կդիմանա՞ արդյոք: Այդ մասին երազելն անգամ ավելորդ կարող է լինելու ու քանի որ այլ երգ չկա, ապա հարկ է լինում հաշտվել այն մտքի հետ, որ ես ել կգնամ նրա հետևնից՝ ամեն տեղ, և ինձ հետ էլ կկատարվի այն, ինչը նրա հետ է լինելու: Բայց ի՞նչ կիմնի, ինչո՞վ այս ամենը կվերջանա, ոչ որ հաստատ ասել չի կարող: Անում է միայն սպասել: Հասկացա՞՞ր դու ինձ արդյոք: Հաճախ գրիր<sup>12</sup>»:

1890 թ., էջ 975

## (Թերթ 5)

Նոյեն ամսաթվով Եվգենիա Լավրուսիչը գրում էր Կիև՝ Միխայիլ Լավրուսիչին, հետևյալը. «Մենք առաջվա այս ենք ապրում, նախկինի պես Քրիստովորը սակավ է տանը լինում, քանի որ շատ գործեր ունի, առաջվա պես օրե-

բով ժողովուրդը մեզ մոտ է հավաքվում»:

### 1890 թ., էջ 1013

#### (Թերթ 5)

Նինա Սեմյուրատովան 1890 թ. դեկտեմբերի 1-ին գրում էր Եվգենիա Լավրուսիշին. «Ես այնքան լավ հասկացա, թե ինչ ես դու գրում Քրիստովորի մասին. Նոյն տպավորությունն է բողոքում նաև Միխայիլը (այսինքն՝ Լավրուսիշը), տեսնում ես, որ մարդն իր կյանքում շատ բան է տարել, բայց միևնույն ժամանակ այդ մարդը ոչ մի բանի առաջ կանգ չի առնի, պատրաստ է իրեն ամբողջովին նվիրել ուրիշներին: Իսկ մի՞թե շատ են նմանները: Սեկ, երկու և հաշիվը վերջացավ»:

### 1891 թ., էջ 108

#### (Թերթ 6)

1891 թ. հունվարի 9-ին Եվգենիա Լավրուսիշը գրում էր Մարիա Բաբրաձեին՝ Փարիզ. «Մենք առաջաւ պես ենք ապրում: Քրիստովորը նոյն կերպ զրադական է առավոտից երեկո, իսկ եթե տաճն էլ ինում է, ապա ժողովուրդն անդադար զայիս ու գնում է, շարունակաբար ինչ-որ բանակցություններ են տարփում: Արշակը նոյնպես անընդհատ վազում է՝ առավոտից երեկո...»:

### 1891 թ., գ. 131, 3-րդ գործ.

### 1891 թ., էջ 286

#### (Թերթ 6)

Գաղտնի որոնումների միջոցով Դեպարտամենտում ստացվել էր նամակ. «Արա-Գեղեցիկ Ռուչչուկից<sup>13</sup>, 1891 թ. փետրվարի 23-ին, հասցեազրկան Եվգենիա Լավրուսիշին՝ «Քրիստովորի համար» ստորագրությամբ, հետևյալ բովանդակությամբ. «Ժամանելով Ռուշուկ՝ մենք սկսեցինք հավաքել տեղեկություններ այստեղի հայերի մասին: Պարզում է, որ նրանք բաժանվում են 3

խմբի, այսինքն՝ Մարտեցիների<sup>14</sup>, Զեյթոնցիների<sup>15</sup> և Չուռնաշխատների<sup>16</sup>: Առաջին երկու կուսակցությունները նախկինում իրենցից բավականին զգալի ուժ էին ներկայացնում և մեծ զումարներ էին կամում: Բայց ներկայաւում Չուռնաշխատների գործողությունների ուժեղացման հետևանքով նրանք կորցրել են իրենց նշանակությունը: Իմ այստեղ մնալը նպատակ ուներ նաև ամրապնդել միությունը Ժանացիների հետ, որի հետևանքով ես նրանց հայտնեցի պայմանները, բայց պարզեց, որ նրանք դրանք չեն ստացել: Այժմ մնում է միայն զնալ այստեղ և անձամբ վերջացնել այս հարցը: Ես կտահ եմ, որ դա հաջողությամբ կպասկվի և ամեն ինչ լավ կլինի: Այնուետև մենք կզբաղվենք տեղացի գաղրականների մեջ մեր տպագիր ստեղծագործությունների տարածումով, և վերջապես՝ այն կարևոր հարցով, որը քեզ և ինձ է հայտնի: Այժմ մնում է միայն քեզնից ստանալ քրդական քոլոզներ: Չ-Ա<sup>17</sup> ուզում է միանալ ձեր կուսակցությանը, բայց դուք նրան մի ընդունեք, քանի որ հակառակ դեպքում ձեր գործիչներից շատերը կիրածարվեն ձեր կուսակցությանը մասնակցելուց: Գլխավորն այն է, որ նա ոչինչ չպետք է իմանա ինձ և քեզ հայտնի հարցի մասին»:

Այս ամենը ի նկատի ունենալով՝ Ոստիկանության Դեպարտամենտը 1891 թ. մարտի 19-ին N 1241-286-ով խնդրում էր Թիֆլիսի Նահանգային ժամդարմական վարչության պետին հասուկ ուշադրություն դարձնել Միքայիլանցի գործունեությանը և հարաբերություններին:

### 1891 թ., գ. 180, մ. 2, 4-րդ գործ.

### 1891 թ., էջ 321

#### (Թերթ 6-7)

1891 թ. մարտի 15-ին Թիֆլիսից Քրիստովոր Միքայելյանցը Ղարասու

<sup>13</sup> Ռուչչուկից «Արա Գեղեցիկ» ծածկանունով քր. Միքայելյանին ուղարկված նամակի հեղինակը Հովհ. Լոռու-Մելիքյանն էր՝ ՀՅ Դաշնակցության հիմնադիր սերնդի նշանավոր դեմքերից մեկը:

<sup>14</sup> «Մարտեցիները» Մարտելում հրատարակվող «Արմենիա» թերթի գաղափարակիրներ-Արմենականներն էին:

<sup>15</sup> «Զեյթոնցիները» Կովկասում ու մանավանդ Բալկաններում իր առանձին կազմակերպությունը հիմնած և դրանի աննպատճ ժողովարարությամբ գրաղվող գեյրունցի Հարություն Զարդյանի կողմանիցներն էին:

<sup>16</sup> «Չուռնաշխատներ» կամ ուղղակի՝ «Չուռնաշխներ» անունով բնորոշում էին Հնչակյաններին:

<sup>17</sup> Չ-Ա գեյրունցի Հարություն Զարդյանն է: Իսկ «քրդական քոլոզները» պայմանական արտահայտություն է, որի բովանդակությունը հնարավոր չնշավ ճշտել:

Քազարի հայկական դպրոցների ավագ ուսուցիչ Զախար Ումիկովին<sup>18</sup> է ուղարկել նամակ հետևյալ բռվանդակությամբ. «Ձեր հավաքած մարդկանց պահեք պատրաստ վիճակում և զինեք նրանց ինչպես հարկն է, իսկ անապարհելու ժամանակի մասին հաղորդեք անմիջապես: Ներկայում հրացանների մեծ պակաս ենք գգում: Այստեղ՝ սահմաններին մոտ գտնվող քաղաքներում, աշխատել են հեռացնել ոստիկանությունում ծառայող բոլոր հայերին: Երևում է մեզ կավածում են և սկսում են հետապնդել, բայց առայժմ մեզ ոչինչ չեն կարող անել: Ժողովուրդը, տեսնելով նման արարքները, բացում է իր աշքերը և բուրքերից անկախ, ավելի ու ավելի է տրամադրվում իր թշնամիների դեմ: Էրզրումից մենք ստանում ենք հաճելի նորություններ: հաղորդում են, որ այնտեղ գործերը շատ լավ են ընթանում: Առկա են երկու զինապահեստներ և շուտով Մուշ կմեկնեն երեք հրաշալի ուժեր: Կովկել ցանկացողները շատ են... Շուտով Կ-ն<sup>19</sup> ձեր կողմերում կլինի: Արան կարող եք լիովին վստահել»:

Սույն նամակի պատճենը ուղարկվել է Կովկասի Քաղաքացիական նախառարի տեղակալի, Ոստիկանության պետի 1891 թ. մարտի 28-ի N 713 նամակով և լրացնով, որ ի նկատի ունենալով Սիրալիանցի ազիտատորական գործունեությունը, կարծում ենք, հարկ է նրան աքսորել Կովկասից:

### մտ. 2918

#### (Թերթ 7)

Թիֆլիսի Նահանգային ժանդարմական վարչության պետը 1891 թ. մայիսի 3-ին N 343-ով տեղեկացրել է, որ գեներալայուտանու Շերեմետևի կարգադրությամբ Սիրալիանցի և նրա բնակակցությունուն կատարելու համար կատարելու մասին համար գործունեությունը, կարծում է լրացն որում կատարվել, ընդ որում, բացի ըստ Երևույթին՝ քաղաքականապես անբարեհույս տարրերի պատկերող մի քանի ֆոտոնկարներից:

<sup>18</sup> Զաքար Ումիկովը (Ումիկյանը) Հայ Յեղափոխականների Դաշնակցությանը հարած հայ ազատամարտի հին գործիչներից մեկն էր:

<sup>19</sup> Կ-ն այդ օրերին Յարավային Ռուսաստանի քաղաքներով շրջող Կոստանդին Խատիսյանն է ՀՅ Ղաշնակցության հիմնադիր սերնդի վար ներկայացուցիչներից մեկը: Նետագայում գործել է Բաքվում մնալով ՀՅԴ համակիրը:

դատապարտելի ոչինչ չի հայտնաբերվել: Միքայիանցը ժամանակավորապես կալանվել է Սետեխի բանտում, որից հետո աքսորվել է Նովչերկասկ՝ մեկ տարվա ընթացքում Կովկաս վերադասնալու արգելվող: Նրա հետ միասին մեկնել է նաև Եվգենիա Լավրուսևիչը:

### մտ. 3129

#### (Թերթ 7)

Դոնի Մարզային ժանդարմական վարչության պետը 1891 թ. մայիսի 14-ին N 412-ով Դեպարտամենտին հաղորդել է, որ Քրիստոնակոր Սկրտիչի Սիրալիանցը մայիսի 6-ին ժամանել է Նովչերկասկ՝ Թիֆլիսի ոստիկանապետի տված տեղափոխան վկայականով, և որ նրա նկատմամբ սահմանված է զաղտնի հկողություն:

### 1891 թ., գ. 131

### 1891 թ., էջ 622

#### (Թերթ 7-8)

Եվգենիա Լավրուսևիչը Նովչերկասկից Թիֆլիս, բուժակուի Եկատերինա Դավիթոսին 1891 թ. հունիսի 17-ի նամակում դգործել է իր և Սիրալիանցի հանդեպ Նովչերկասկի Ոստիկանապետի կողմից գործադրվող ճնշումներից, ինչը ի նկատի ունենալով Դեպարտամենտը 1891 թ. հունիսի 3-ին N 2912-622-ով խնդրել է Դոնի Մարզային ժանդարմական վարչության պետին հաղորդել տեղեկություններ Նովչերկասկում Սիրալիանցի գրադմունքների և կապերի մասին:

### մտ. 7783

#### (Թերթ 8)

Գնդապետ Ստրախովը 1891 թ. հունիսի 10-ի N 623-ով տեղեկացրել է, որ Սիրալիյանցը ցանկություն է արտահայտել ապրելու Քիշինևում, որի հետևեանը հունիսի 25-ին Նովչերկասկի Ոստիկանապետի կողմից նրան տրվել է անարգել Քիշինև տեղափոխվելու վկայական, և այդ մասին հաղորդվել է Քիշինևի ոստիկանապետին:

**գ. 510, մ. 1  
(Թերթ 8)**

Կովկասում հայ ազգային շարժման ուժեղացման մասին տարրեր աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա Ռուսիկանության Դեպարտամենտը 1892 թ. հոկտեմբերի 14-ին N 5179-ով առաջարկել է Թիֆլիսի Նահանգային ժամդարմական վարչության պետին սահմանել ամենամանրակրկիտ գաղտնի հսկողություն՝ առավել հայտնի ազիտատորների, այդ թվում և Միքայիլանցի նկատմամբ՝ նրանց հետաքննության մեջ ներգրավելու համար բավարար տվյալներ հայտնաբերելու նպատակով:

**մտ. 6568  
(Թերթ 8)**

Գեներալ-մայոր Յանկովսկին 1893 թ. մայիսի 25-ի N 433-ով հաղորդում է, որ առկա տեղեկությունների հիման վրա նա հանգել է այն համոզմանը, որ գինեվաճառ Արշակ Տեր-Գրիգորիանցը, Արքահամ Դոստակով<sup>20</sup>, Գավրիիլ (Գարոն) Սիրզոնը, քիչչի Իվան Լոռիս-Սելիբրովը, Քրիստափոր Միքայելյանցը, Հակոբ Դեմոսիխանը, Վագարտան (Վարդան-Հ. Հ.) Մաքենոսյանցը և Ստեփան Լիսիցիանը<sup>21</sup> կազմում են քուրքահայերի կարիքների համար անհրաժեշտ գումարների հավաքման հարցում գործուն մասնակցություն ունեցող անձանց խմբակ: Նախկինում նրանց հավաքները տեղի էին ունենում տարբեր մասնավոր քննակարաններում, վերջին ժամանակներում նրանք իրենց հավաքները տեղափոխել են Բարնակայա փողոցի Սահակովի տանը գտնվող Հայկական գրքերի տարածման ընկերության<sup>22</sup> շենք և Ար-

շակ Տեր-Գրիգորյանցի գինու մառան: Այդ խմբակի վրա, այսպես ասած՝ գերազույն դեկավարությունն իրենց վրա են վերցրել Թիֆլիսի Դումայի անդամ Իզմայլովը՝ Քաղաքային վարչության փաստորեն նշտական անդամը և Արքար Խոնճիսանին<sup>23</sup>, ինչպես նաև Թիֆլիս նահանգի պետական գույքի կառավարիչ Խատիսովը. այս երեք դեմքերը, կարելի է ասել, իրենցից ներկայացնում են ամենալուրջ ուժը, քանի որ հայ հասարակության մեջ մեծ ազդեցություն և հայկական թերթերի աշխատակիցների թվում՝ հավատարիմ մարդիկ ունեն:

/Սպորտագրություն/

**95 թ., մտ. 18406, էջ 1073, 1722 և 1986-  
92 թ., մտ. 14671, գ. 510, մաս 4  
(Թերթ 9-12)**

*Պատճենների գործերի միևնակրությունների հարթակների մասնակիցների հայկական թագավորության մասնակիցների հայկական թերթի խմբագրության հաշվապահ Ինոսիֆ Ավետով Կիրակոսվի միջոցով հարաբերություններ են պահպանում ոմն «Քրիստափորի» հետ, որին են հանձնարարել զինագործական արհեստանոցի համար լավ պատրաստված հրահանգիչների վիճարությը, այն հաշվարկով, որ հովհանն նրանք արդեն Թավրիզում լինեն և բաշխվեն ըստ տեղերի: Ընդհանրապես*

20 Արքահամ Դոստակովը Յայ Յեղափոխականների Դաշնակցության առաջին Կենտրոնի անդամ Արքահամ Դաստիարակության մասնակիցների հետ միասին մասնակցել է նորաստեղծ Յայ Յեղափոխականների Դաշնակցության աշխատանքներին: 1907-ին Լ. Շանթի ու Յ. Թունանյանի հետ հրապարակել է «Լուսաբեր» մայիսի լեզվի դասագիրքը, 1928-ից՝ Յայաստանի Պետական պատմական թանգարանի վարիչ:

21 Ստեփան Լիսիցյանը (1865-1947) այլ գիտնականների հետ միասին մասնակցել է նորաստեղծ Յայ Յեղափոխականների Դաշնակցության աշխատանքներին: 1907-ին Լ. Շանթի ու Յ. Թունանյանի հետ հրապարակել է «Լուսաբեր» մայիսի լեզվի դասագիրքը, 1928-ից՝ Յայաստանի Պետական պատմական թանգարանի վարիչ:

22 Յարական Օխրանայի կողմից «Յայկական գրքերի տարածման ընկերություն» կոչվող կազմակերպության հսկական անվանումն էր «Կովկասի Յայոց հրատարակչական ընկերություն», որը 1891թ. ապրիլից անցել էր նորաստեղծ Յայ Յեղափոխականների Դաշնակցության հակակշոր տակ: Նախագահ՝ Ալ. Քալանթրա, քարուսլար՝ Յավոր Քոչարյան:

23 Արքար Խոնճիսանի (Արքար Յովհաննեսիսան), 1849-1904,- Թիֆլիսում հրատարակվող «Փորձի» և ապա՝ «Արծագանքի» խմբագիր, հրապարակախոս, թատրոնական գործիչ: Ակնհայտ է, որ Ստ. Լիսիցյանին ու Արքար Յովհաննեսիսանին և այլոց համախմբելու միջոցով քր. Սիրայելյանն ու նրա ընկերները ստեղծել էին որոշակի շրջանակ՝ դրամական միջոցներ հայրայելու համար:

«Քրիստափորի» կապերի բնույթը Պարսկաստանի իր համախմբերի հետ ցոյց է տալիս նրա հայկական շարժման լուրջ գործիչ լինելը, որը Պարսկաստան է ուղարկում դրամի բավական մեծ գումարներ: Այս առիթով կատարված հարցմանն ի պատասխան Կովկասի Քաղաքացիական մասի կառավարչի գրասենյակը Դեպարտամենտ է ուղարկել Թիֆլիսի նահանգապետի սթօնությունի 30-ի N 869 կարծիքը, որից հետևում է, որ Խոսիֆ Ավետով Վիրակոսվը մոտ է հետևյալ անձանց. Նիկոլայ Մատինյանի՝ ծառայող ֆրանսիական հյուպատոսարանում, Ստեփան Քանանյանցի՝ Թիֆլիսի երեքայսյա Արիեստավորական ուսումնարանի աշակերտ, Բարոն մեկնած Հովհաննես Քարխուղարյանցի, դրամափոխ Ալեքսանդր Ստեպանովի և պատրաստի հագուստեղենի առևտրական Մարգար Մովսեսյանցի հետ: Նահանգապետի տեղեկացմամբ՝ բոլոր այս դեմքերը սերտ ընկերության մեջ են ինչպես իրար հետ, այնպես էլ «Մշակ» հայկական թերթի խմբագիր Ալեքսանդր Քալանյարի, նոյն թերթի աշխատակից Խաչատոր Մալումյանի<sup>24</sup> և Ղուկասյանի հետ, որն աշխատում է Ենթաջանցի ծխախտի գործարանում, ընդորում՝ հաճախ հավաքվում են «Մշակ» խմբագրությունում՝ տարբեր խորհրդակցությունների համար:

Դրանից հետո Ոստիկանության Դեպարտամենտի 4-րդ գործակառությունում գաղտնի գործակալների միջոցով Քարվից ստացվել է 1895 թ. սեպտեմբերի 18-ի անստորագիր նամակը՝ հասցեազրկած Վիրակոսվին՝ «Քրիստափորի» համար, հետևյալ բովանդակությամբ. «Նախորդ նամակին պատասխան չունեմ: Պատկիլ<sup>25</sup> գրում է, որ

<sup>24</sup> Խաչատոր Մալումյան (Ա.Ակնումի), (1863-1915) թ37 հիմնադրի ժողովների շրջանում Գր. Արծունու անպաշտու ներկայացուցիչն էր համարվում ։ Կա Յեղափոխականների Դաշնակցության մեջ: Յետագյուղում թր. Միքայելսանի անմիջական ազդեցությամբ, անմնացորդ կերպով նվիրվեց կուսակցությանը: 1898-ից դրամավ «Դորշակ» աշխատակիցը, Եվրոպայում քարոզչություն ծավալեց Յայկական հարցի օգտին: Սահմանադրությունից հետո հաստատվեց Կ. Պոլսում, թ37 Արևմտյան Բյուրոյի անդամ էր և Սեծ եղունի գրիերից մեկը դարձավ:

<sup>25</sup> «Պապիկ» Պարսկաստան ուղարկած հին գործիչներից էր, որի անը չհաջողվեց ճշտել: Ճնարավոր է Տիգրան Ստեփանյանն է, Քրիստափորի բնորոշմամբ՝ «մալիմի գեներալ», որին չեն ցանկանում ընդունել իր ու դեմքավար Թավիդի դաշնակցականներոց: Տես Ո. Սեւեան, թ37 առաջին գործիչներն ու հեռուներոց, «այսթեմիք» Բուստոն, 1937, N 10, էջ 126:

<sup>26</sup> Պետոն դրամի հայրայրման համար Բարոն անցած Ալեքսանդր Պետրոսյանն է թ37 առաջին գործիչը Վան-Վասպուրականուն: Վերջինին անվան հիշատակնամբ հաջորդող «Իշխան» Յովենի Արությանն է (Խանասորի Իշխան), «Քորոբն» ու «Արիստակես» Ռուսումն ու նոր եղբայրն են, իսկ «Աշոտը» Էրզրումի Արամ կրամանն է (Արշակի Յովսասակյան):

Պետոն շուտով պետք է զա մեզ մոտ, բացի դրանից, մենք լսել ենք, որ դոր էլ եր ստացել նամակ այդ վայրերից, որի պատճենը ցանկանում եք ուղարկել մեզ: Պատկիլ դժգոհում է, որ իբր թե դոր մոռացել եք նրա մասին, որ արդյունքում նրան այնտեղ չեն ուղում ճանաչել որպես առաջնորդ: Մի՞թե իրականում դա այդպես է: Որքան ես հիշում եմ, դուք նրան ուղարկեցիր բավականին կարևոր հանձնարարությամբ:

Ծովիի ապրանքներից ստացանք 60 հատ: Ինչ վերաբերում է մնացած ապրանքի ուղարկմանը, ապա մենք դժվարանում ենք, քանի որ գտնում ենք, որ ամեն մի ապրանքի ուղարկման համար երեք ուղիղություններ կճարը թանկ է: Պետք է անհապաղ և ինչ չան հնարավոր է շուտ գրադարձել ապրանքի անցկացման նոր ուղղության ընտրությամբ, քանզի դժվարություններ և անհարմարություններ են հանդիպում: Լուր է տարածվել Պետոնի<sup>26</sup> ժամանական մասին: Սենք ենթադրեցինք, որ Իշխանի գալլ կազմակերպությունը դրամը, թէ՞ ոչ: Ի՞նչ նորություններ ունենք ընդհանրապես, հատկապես՝ Ըորորից և Արիստակեսից: Ի՞նչ ձերբակալություններ են տեղի ունեցել ձեզ մոտ և այլ վայրերում, և որո՞նք են ձերբակալությունների պատճառները: Որտե՞ղ է հիմա Աշոտը: Գրեք հետևյալ հասցեով. Բարոն, Սամսոն Հովկակիմյանցին, Արքյուր Ծովերտի գրասենյակ, Հովկակիմյանց բառը երկու անգամ կը նոդեմք:

Հշյալ նամակի վերաբերյալ, անցած սեպտեմբերի 29-ի N 7937-1722-ով լիակատար Վաստահությամբ հայտնվել է Բարվի Նահանգային ժանդարմական վարչության պետին՝ խնդրելով միջոց-

ներ ձեռք առնել նամակի հեղինակին գաղտնի կերպով պարզելու համար: Թիֆլիսի Նահանգային ժանդարմական վարչության պետին ևս, նոյն ամսաթվի N7938-1722-ով առաջարկվել է Կիրակոսվին հետևելու միջոցով պարզել «Քրիստափորի» անձը:

Անցած հոկտեմբերի 22-ին Դեպարտամենտում ստացվել է գնդապետ Ֆոն-Ֆրանկի հեռազիրը հետևյալ բովանդակությամբ. «Թիֆլիսում և Բարքում N 7937-ով նշված անձանց մոտ պահնորդության կարգի համաձայն իրականացված խուզարկության արյունքում ստացվել են տեղեկությունների փաստացի հաստատումները: 19-ի և 20-ի 6 միաժամանակյա խուզարկությունները տվել են մեծ քանակությամբ նյութեր և ցուցումներ: Գանձապահ Դավթյանը<sup>27</sup> մեկնել է Թիֆլիս, իմ պահանջի ուշացած կատարումը նրան թարնվելու ժամանակ է տվել: Չնայած դրան, հաջորդ պահանջն այն մասին, որ կուսակցության դեկավարը՝ Քրիստափորը, Թիֆլիսում է և պետք է լինի Միքայելիանցը, կամ Մալումյանը և նոյնիսկ Գենջյանը<sup>28</sup>, չի կատարվել՝ ցուցումներ չտալու պատճառով: Խնդրում եմ տալ կարգադրություն՝ Թիֆլիսում իմ պահանջների հստակ և արագ կատարման մասին: Հայերը ծայրաստիճան գօնն են, արագություն է պահանջվում: Իմ կողմից ձերքակալվել է Զայլիսը<sup>29</sup>: 25-ին ստացված N 688 գեկույցով պարզել վերոնշյալը: Մանրամասնությունները փոստով»:

Դեպարտամենտը, չունենալով տվյալներ գործի քննարկման համար, նոյն ամսաթվով ուղարկված հեռազրով սահմանափակվել է գեներալ-մայոր Յանկովսկուն ու ձերքակալման համար, իսկ Միքայիլանցի, Մալումյանի և Գենջյանի մասին Դեպարտամենտի N 7938-1722-ում հիշատակված «Քրիստափորին» և միջոցներ ձեռք առնել գնդապետ Ֆոն-Ֆրանկի կողմից նշված Դավթյանի հետախուզման ու ձերքակալման համար, իսկ Միքայիլանցի, Մալումյանի և Գենջյանի մասին Դեպարտամենտում առկա

<sup>27</sup> Գանձապահ Դավթյանը Ներսես Դավթյանն է շրջանից հայտնի «Դրաշակին», որը Կ. Խատիսյանի ուղարկության առանցքային դեմքերից մեկն է:

<sup>28</sup> Ենովք Գյոնջյանը Դայ Յեղափոխականների Դաշնակությանը գործիչներից մեկն է:

<sup>29</sup> Զայլիսը «Դայընաստերների Միության» անդամ Միքայել Զայլյանն է, որը Ներսես Դավթյանի նման անդամագրվեց Դաշնակությանը:

տեղեկությունների ավելի ուշադիր քննության արդյունքում Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետին հոկտեմբերի 24-ի հեռազրով հաղորդվել է, որ ամենայն հավանականությամբ «Քրիստափոր» Ազուխս գյուղի բնակիչ Քրիստափոր Սկրտիչի Միքայիլանցն է: Գեներալ-մայոր Յանկովսկին հոկտեմբերի 25-ին հեռազրել է Դեպարտամենտին, որ Միքայիլանցը և Մալումյանը ձերքակալված են և տեղափոխվում են Բաքու, որտեղ պետք է գտնվի նաև հետախուզողը Դավթյանցը: Այսուհետև ստացվել են նաև Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետի անցած հոկտեմբերի 16, 18 և 25-ի N 637, 692 և 728 գեկուցագրերը, որոնք բացատրություններ են պարունակում վերոնշյալ հեռազրի մասին և նկարագրում են Դեպարտամենտի սեպտեմբերի 29-ի N 7937-1722 կարգադրության հետ կապված նրա գործողությունները: Ըստ պատկանելության հաղորդելով վերը շարադրվածի մասին, Ոստիկանության Դեպարտամենտի 3-րդ գործավարությունը պատիվ ունի 4-րդ գործավարությանը փոխանցելու. 1) Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետի վերոնշյալ 3 գեկուցագրերի պատճենները, 2) նրանց կցված Դեպարտամենտի Տնօրենի սթ նոյեմբերի 6-ի N 9309 նամակի տրամադրումը՝ հավելվածով հանդերձ, 3) «Քրիստափորի» մասին տեղեկություններով՝ Դեպարտամենտի հաղորդագրության տրամադրումը և 4) տեղեկագրեր Քրիստափոր Միքայիլանցի և Խաչատոր Մալումյանի մասին՝ վերջիններս հնարավորին կարծ ժամանակվա ընթացքում վերադարձնելու խնդրանքով:

Այս ամենին 3-րդ գործավարությունը պատիվ ունի ավելացնելու, որ Էնոսիֆ Կիրակոսվը անցած հոկտեմբերի 21-ին ձերքակալվել է Թիֆլիսում և երկու ժանդարմական ներքասաների պահակախմբի հսկողությամբ ուղարկվել է Բաքվի նահանգային ժանդարմական վարչության Քրիստափոր Միքայիլանցի գործունեության նարողնիկական շրջանից հայտնի կողմանակիցների հեռանալուց հետո դաժան շահ առաջակա կազմակերպության առանցքային դեմքերից մեկը:

<sup>27</sup> Զայլիսը «Դայընաստերների Միության» անդամ Միքայել Զայլյանն է, որը Ներսես Դավթյանի նման

պետի տրամադրության տակ:

Ստորագրեց Հատուկ հանձնարարությունների պետական պաշտոնյա Ռատակ

Ճիշտ է՝

/Ստորագրություն/

**մտ. 20123**

(Թերթ 13)

Պարմեն  
Գաղլուն

Ներքին գործերի մինիստրություն  
Ուստիկանության Դեպարտամենտ  
Հայր «4-րդ» գործավարությունը  
29 նոյեմբերի 1895 թ.

N 2778

Նոյեմբերի 9-ի N234 գրության հետևանքով Ուստիկանության Դեպարտամենտի 4-րդ գործավարությունը անհրաժեշտության վերացման պատճառով պատիվ ունի 3-րդ գործավարությանը վերադարձնել Քրիստովոր Միքայելացի և Խաչատոր Մալումյանցի մասին տեղեկագրերը:

Ստորագրեց՝

գործավար  
/Ստորագրություն/

Ուստիկանության

Դեպարտամենտի 3-րդ վարչությանը

**մտ. 3414**

(Թերթ 14)

Ներքին գործերի մինիստրություն  
Ուստիկանության Դեպարտամենտ  
Հայր «3-րդ» գործավարության  
1 դեկտեմբերի 1898 թ.

N 1031 [անընթանիլ է]

Թիֆլիսի Նահանգային ժանդարմական վարչության պետը ուստիկանության գաղտնի հսկողության տակ գտնվող Եվգենիա Բարուշկինային արտասահման հրավիրելու մասին ս/թ-ի նոյեմբերի 19-ի N2502 հաղորդագրության մեջ հիշատակում էր նաև նրա բնակընկերոջ, գաղտնի վերահսկողության տակ գտնվող Քրիստովոր Միքայելացի արտասահման մեկնելու վերաբերյալ, ընդ որում, վերջինիս ս/թ-ի հոկտեմբերի 23-ին տրվել է արտասահմանյան անձնագիր՝ Թիֆլիսի նահանգապետի գրասենյակից:

[անընթանիլ] գործ N 594

Ուստիկանության

Դեպարտամենտի Հայուն բաժնին

/Ստորագրություն/

**Նահանգապետի ս/թ-ի հոկտեմբերի**

**23-ի N 757-ի մասին**

(Թերթ 15)

[Որոշ բառեր անընթանիլ են]

Ոստիկանությունը վերոհիշյալ Բարուշկինային մտտակա սահմանային կետեր... [անընթանիլ]

Ոստիկանության Դեպարտամենտի 3-րդ գործավարությունը Միքայելացի արտասահման գնալու մասին պատիվունի հայտնելու Հատուկ բաժնին՝ տեղեկությունների և անհրաժեշտ կարգադրությունների համար:

Գործավար /Ստորագրություն/

*ԱՏ. N 3414  
(Թերթ 16)*

*Տեղիկացքները հանձնված և 2 դեկտեմբերի 1898 թ.  
\_\_\_\_\_ // \_\_\_\_\_ սպացված և... 189 թ*

*Հասուկ քաժինը խնդրում է նշել այն գործերը, որոնցում հիշատակվում է հայ  
Քահանակոր Միհայելյանցը\*:*

*/Աղողոսագրություն/*

Ըստ 3-րդ գործավարության  $\frac{1061 \text{ մ. 2}}{89} / 22771, \frac{560 \text{ մ. 2}}{98} / 12310,$   
 $\frac{510 \text{ մ. 4}}{92} / 17887, \frac{510 \text{ մ. 5}}{92} / 18347, 18406$   
 $\text{_____} // \text{_____} 4\text{-րդ} \frac{305}{95}, \frac{245}{95}, \frac{305 \text{ մ. 2 հ. 1}}{95}, \frac{112}{96}, \frac{245}{95} [\text{ամսմքեամելի}]$

$\frac{190}{97}, \frac{80}{98}$

*/Աղողոսագրություն/ 5/XII*

$\text{_____} // \text{_____} 5\text{-րդ} \frac{3671}{97}$

*/Աղողոսագրություն/*

$\text{_____} // \text{_____} \text{Հասուկ քաժնին}$

*Ըստ 3-րդ գործավարության  
(Թերթ 17)*

$\frac{22 [\text{ամսմքեամելի}]}{95} 239 / 20186, \frac{70}{95} / 898, \frac{510 \text{ մ. 1}}{92} / \frac{286}{91}, 622,$

$1388 / 20324, \frac{1494}{95} / \frac{131}{91} / 5586, 7783, \frac{510}{92} / \frac{6568}{93}, \frac{1061}{89 \text{ մ. 1}} / \frac{382}{90 \text{ մ. 1}}$

8/X

*/Աղողոսագրություն/*

$\frac{305}{95}, \frac{245}{95}, \frac{305 \text{ մ. 2}}{95}, \frac{305}{95}, \frac{112}{96}, \frac{245 [\text{ամսմքեամելի}]}{95}, \frac{190}{97}, \frac{80}{98}$

\* Ոստիկանության Ղեպարտամենտի 3-րդ, 4-րդ և 5-րդ գործավարություններում պահվող վավերագրերի ցուցակը կարող է հրաշալի նվեր դառնալ բոլոր նրանց համար, ովքեր Սոսկվայում գտնվող Ռուսաստանի Դաշնության պետական արխիվում նոր վավերագրեր կփնտրեն թր. Միհայելյանի ու ԳՅԴ գործունեության մասին

## (Թերթ 18-19)

Գաղտնի  
Շրջաբերականով

ՆԳՆ

Ուսիրկանության  
Դեպարտամենտի  
Հարուղ բաժին  
դեկտեմբերի 1898 թ.

N 2224

Պ. Ա. Սահմանային ժանդարմական  
պահակակիրերի պիկրերին

Քաղաքական քարենության  
առումով կասկածներ հարուցող ներքոհիշյալ  
անձններ ներկայումս բնակվում են  
արտասահմանում։

1) Վասիլևսկի Լեվ, Վարշավայի համալսարանի նախկին ուսանող

2) Վայսման, Բենիամին Դուվիդով, Սորոկսկի քաղենի, Բրեստ-Լիտովսկի սակրափորմերի վաշտի պահեստային շարքային, անձնագրով՝ տրված Օդեսայի Քաղաքապետի կողմից 1898 թ. հուլիսի 31-ին N 4083։

3) Սելինկով Նիկոլայ Կոնստանտինովիչ, քաղենի իրկուտսկից։

4) Սիրայելյանց (Սիրայիանց) Քրիստոփոր Սկրտիչև (Նիկիտին), Երևանի նահանգի, Նախիջևանի գավառի, Ազուլս զյուղի բնակիչ, անձնագրով՝ տրված Թիֆլիսի նահանգապետի կողմից 1898 թ. հուլիսի 23-ին N 757։

Հայտնելով վերոշարադրյալի մասին, Ոստիկանության Դեպարտամենտը պատիվ ունի խնդրելու Ձերդ Գերազանցությանը նշված անձնանց Ռուսաստանի տարածք վերադարձի վրա սահմանել վերահսկողություն և Ձեր դիտարկման տակ դրված սահմանային կետերով նրանց անցնելու դեպքում մաքսատան պաշտոնյաների ուշադրությունն ուղղել նրանց ուղերեսների մանրակրկիտ զննման վրա և ինչ-որ դատապարտելի բան հայտնաբերելու դեպքում ձերբակալել ու հեռագրել Դեպարտամենտին՝ հե-

տագա ցուցումներ ստանալու համար։ Հակառակ դեպքում, բույլարել հանգստ շարժել՝ Դեպարտամենտին և համապատասխան ժանդարմական վարչության պետին հայտնելով նրանց ընտրած ճանապարհի ուղղությունը, որպեսզի նշված անձնանց նկատմամբ երկու ամսվա ընթացքում սահմանվի հատուկ գաղտնի հսկողություն, և նշված ժամկետը լրանալոց հետո, դրանց արդյունքների մասին հաղորդվի Դեպարտամենտին։

*Սկրուգրից. Տնօրինի փոխարեն՝  
Մեմյակին*

*Կմը. Հարուղ հանձնարարությունների պետական պաշտոնյան  
Ռազմական*

*Շիշոյ է գործավարի օգնական /  
Սկրուգրություն/*

1901 թ. էջ 5183

24 նոյեմբերի 1901 թ.

(Թերթ 20)

Գաղտնի գործակալների միջոցով ստացված նամակի պատճեն՝ «Ք. Քրիստոփոր» ստորագրությամբ, Մոսկվա, 17 նոյեմբերի 1901 թ. Վ. Լունկիչին<sup>31</sup>, Շարլուտենբուրգ, Վիլմերսդորֆերշտրասե, 125։

Թանկագին Վանյա։ Ես քեզ ճանապարհից արդեն քարտ էի ուղարկել։ Այժմ հայտնում եմ, որ այսուել քարենացող ապրեցի 8 օր։ Կանգ եմ առել Էյնարովների մոտ, որոնք ինձ հետ շատ սիրալի են և որոնց ես շատ շնորհակալ եմ։ Շատ բան չհաջողվեց։ Առայժմ փոխանցել եմ միայն 500 ռուբլի։ Խոստացել են հետագա աջակցություն։ Ուսանումներն ավելի լավ դուրս եկան, քան ես սպասում էի, իսկ մնացածները սրիկաներ են, որոնց առայժմ պետք է հանգիստ քողնել<sup>32</sup>։ Ուղարկում եմ քեզ ժառանգականության մասին գրքով։ Սեկ ժամից մեկնում եմ։

Պ. Բաժնի վարիչի նշումը. «Խորհրդակցել»։

*Նորին Գերազանցություն Ա. Վ.*

31 Լունկիչ Վալերիան Վիկոնտը (Արարատսկի)։ Լեհ արքորական հորից ու հայ մորից Երևանում ծնված հեղափոխական նարողների, իսկ ավելի ուշ՝ սոցիալիստ-հեղափոխականների (էսեների) կուսակցության գործիչ։ Թր. Սիրայելյանի ու 73 Դաշնակցության ջերմ բարեկամը։ Նետագյուտ դարձել է խորհրդային գիտնական, ապրել է բանական Երևան և մահացել ։ Հայրենական պատերազմի ժամանակ՝ Լենինց գրադից էվակուացիայի ենթարկվելուց հետո։

32 Թր. Սիրայելյան Սոսկվայում էր «Փոթորիկի» գործով, ուստի նրա ակնարկած «սրիկաներո», որոնք ի տարբերություն ուսանողների, խնայում էին իրենց դրամը, տեղի հայ մեծահարուստներն էին։ Քրիստոփորը սկզբնական շրջանում արգելուց եր նրանց համեմա գործադրել որևէ բռնի միջոց։

**Չուրակովովիմ<sup>33</sup>**  
**5 դեկտեմբերի**

N 4391

/Սլորագրություն/

**1901 թ., էջ 5184**  
**24 նոյեմբերի 1901 թ.**  
**(Թերթ 21)**

Գաղտնի գործակալների միջոցով ստացված նամակի պատճենը՝ «Ըն Քրիստովով» ստորագրությամբ, Մոսկվա, 17 նոյեմբերի 1901 թ., քթիշկ Լոռիս-Մելիքովին՝ Փարիզ, Լյուստ փողոց, 18:

Թանկարժին Վանյա: Այստեղ մնացի 8 օր: Առայժմ քիչ բան է հաջողվել: Միքայելի<sup>34</sup> հասցեով ուղարկել եմ 500 ռուբլ՝ այնտեղի պարուքերի վճարման համար: Այսօր այստեղից մեկնում եմ: Կանցնեմ Ռուսով՝ 2 օրով: Այստեղից ինչ-որ մեկը խոստացել է հետագա աջակցություն: Կան համակիրներ: Ուզ առողջ եմ:

**Պ. Բաժնի վարիչի նշումը. «Խորհրդակցել»**

**Նորին Գերազանցություն Ա. Վ.**  
**Չուրակովին**  
**5 դեկտեմբերի**

N 4391  
/Սլորագրություն/

**5183-5184 = էջ**  
**1901 թ.**  
**(Թերթ 22-25)**  
Մ. Ն (Մոսկվայի նահանգապետ)  
N 439 Սերգեյ Վազ.  
5 դեկտեմբերի

Գաղտնի գործակալների միջոցով Ուժիկանության Դեպարտամենտում ստացվել են «Ըն Քրիստովով» ստորագրությամբ երկու նամակների քանդաքճերը, որոնց պատճենները կից ներկայացվում են: (Ստացված շրջաբերականով սահմանային կետում խուզարկման):

Նախահեանի գավառի, Երևանի նահանգի, Ագուլիս գյուղի բնակիչ Քրիստովով Մկրտչի Միքայելյանցի կողմից

33 Սա Մոսկվայի ժամարմների պարագլուխ Ս. Վ. Ղուկասյանի կողմէ:

34 «Միքայելը», որի հասցեով թթ. Միքայելյանը արդեն հասցրել էր ուղարկել այդքան դժվարությամբ հայրայքած 500 ռուբլին, Միքայել Վարանդյան-Շովկիանիսանը է Եվրոպայում հայկական հարցի օգտին քարոզությամբ գրադարձության դեմքը:

Մոսկվայից, անցած նոյեմբերի 17-ին, մեկը՝ Փարիզ, քթիշկ հվան Զարարի Լոռիս-Մելիքովի անոնվ (Գրություն սահմանային կետերին 1900թ. փետրվարի 17-ին N 350-ով), իսկ մյուսը՝ Վ. Լունկեիչին:

Լունկեիչի անոնմով նամակի բռվանդակությունից պարզվում է, որ Միքայելյանցը Մոսկվայում 8 օր բնակվել է Եյնարվաների մոտ, հավանաբար, առանց գրանցման և անձնագրի, և այն հանգամանքը, որ մինչ այժմ սահմանային կետերից չի տեղեկացվել նրա՝ Ռուսաստան ժամանելու մասին, իմք է տախի ենթադրելու, որ Քրիստովով Միքայելյանցը սահմանը գաղտնի է հատել:

Նկատի ունենալով, որ Միքայելյանցը 1890թ.-ից հայտնի է որպես նշանավոր հեղափոխական գործիչ, համաձայն [անընթեռնելի է] միջոցներ ծեռք առնել՝ գաղտնի կերպով պարզաբանելու համար, թե Մոսկվայից կոնկրետ ո՞ր է մեկնել նշված Քրիստովով Միքայելյանցը և հետևանքների մասին տեղեկացնել:

*Ուստի հայտին*

**175/ V**  
**00 15/II**  
**(Թերթ 26-28)**

**ՆԳՆ** **Գաղտնի**  
**Մոսկվայի**  
**հասարարական անվտանգության**  
**և կարգի պաշտպանության**  
**բաժնի պետ**

**Հարգարժան**  
**Լենինգրադ**  
**Ալեքսանդրովիչ**

1901 թ. դեկտեմբերի 5-ի N 4391-ի նամակի հետաքննության արդյունքում, Ձերդ Գերազանցությանը պատիվ ունեմ հայտնելու, որ Քրիստովոր Սկրտիչի (Սիկիտինի) Միքայելյանցի Մոսկվա ժամանման և այնտեղից մեկնելու փաստը հաստատելը հնարավոր չեղավ: Նամակագրությունում հիշատակված Էյնարովներ կոչվածները Ուստիկանության Դեպարտամենտին հայտնի Էյնարովներ անուսիններն են - առաջին կարգի գյուղատնտես, Թիֆլիս քաղաքի ծմունյ Ստեփան Պետրով Էյնարովը մյուս տիրահոչակ «գուրատովչչինայի» կողմանը:

բովք, 34 տարեկան և Սուսաննա Յակովիս Եյնարովկան, ծննդյան ազգանունը Շկոդինսկայա, 25 տարեկան: Նրանք 1899թ.-ից ապրում են Մ. Տեղայա նրանցում Կորոսովի 2-րդ տան, բնակարան N 8-ում, որտեղից էլ 1900 թ. մեկնել են արտասահման՝ ք. Փարիզ: Անցած տարի Եյնարովները գնացել են ք. Թիֆլիս և հետ են վերադարձել սեպտեմբերի 13-ին: Նրանց հետ բնակվում է փոխգննապետ Ալեքսանդր Անդրեև Պուրգասովի աղջիկը, 37 տարեկան, որը տան տերերի բացակայության ժամանակ միշտ հետևում է բնակարանին: 1900 թ. աշնանը Եյնարովների բնակարանում բնակվում էին Ոստիկանության Դեպարտամենտին հայտնի ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բեկնածու Վալերիան-Վալենտին Վիկտորով Լունկիչը, 34 տարեկան, նրա կինը՝ Զոյա Պավլովան, 32 տարեկան և ազնվականի դուստր Եվլա Թամագովա Լոռիս-Մելիքովան, 34 տարեկան:

Անցած տարի Լունկիչը ամուսինները բնակվում էին «Վերսալ»-ի համարներում՝ Բոլցայա Դմիտրովկայի վրա, պետական խորհրդականի աղջիկ Ֆախնա Սիխայլովա Լունկիչի հետ, 24 տարեկան, որտեղից դուրս են եկել: Ըստ նշումների՝ Վալերիան Լունկիչը ապրիի 9-ին մեկնել է Թիֆլիս, Զոյա Լունկիչը՝ մայիսի 9-ին արտասահման, իսկ Ֆախնան՝ դեկտեմբերի 17-ին նոյեմբեր Թիֆլիս: Նշված վայրում ապրելու ժամանակ Լունկիչները մտտիկից ծանոր էին նշված համարների տիրոջ՝ Երևանի բնակիչ յանձնելունելի անունը Գրիգորի Ավետիսյանցի հետ, 39 տարեկան, նոյեն համարների կառավարիչ, Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի նախկին դասախոս Երվանդ Ֆադեև Տալիանովի (Տալիանովյանցի)<sup>35</sup>, 36 տարեկան, բնակվող նոյեն վայրում, Երևանի քաղքենի Հակոբ Քրիստափորի Թաղիսոյանցի հետ, 26 տարեկան և նրա բնակրնելերուն, կոնքիական ասեսորի աղջիկ Կավալիխա Ալեքսանդրի Ռու-

35 Երվանդ Ֆադեևն Տալիանովը՝ Երվանդ Թաղիսոյանը (1864-1948), որը Յա Յեղափոխականների Ղաջնակցությանը հարեց Կոստանդին Խատիսյանի հետ միասին, բայց հետագայում հետ կանգնեց գործից: Այդ շրջանում ապրում էր Մոսկվայում: 1917-ին Բարգուշ հրատարակել է «Գործ» ամսագիրը, եղել է Բաքվի ճայոց հրատարակչական ընկերության նախագահը: 1923-1929 թթ. Երևանի Յանրային գրադարանի տնօրենն էր:

36 «Երմոնտով» ծածկանունի տակ թաքնվող Ոստիկանության Դեպարտամենտի լրտուն թերևս բուլղար-նակերնական շարժման ակտիվ գործիչ է: Պատահական չեն շարժման արմատական թեր Անրիկայացնող Բորիս Սարաֆովի հասցեին նրա դիմուկ, բայց որոշ չափով՝ ծաղրական բնորոշումները, քանզի գոյություն ուներ նաև նոյեն շարժման չափավոր թվով: Յատկանշականն այն է, որ անգամ՝ շարական Ոստիկանության Դեպարտամենտի ամենակարևոր Յատուկ բաժնին տեղեկություններ հաղորդող գործակալների ցանկում մենք չենք հանդիպում ոչ մի դաշնակցականի:

սինովայի, 17 տարեկան, Երևանի նահանգի Նախիջևանի գավառի թնակիչ Ռուբեն Արշակի Հովհաննեսով Սարգսյանի, 37 տարեկան և Սոսկվայի համալսարանի ուսանողները. բժշկ. 5-րդ հոսք՝ Պետրոս Ալեքսանդրի Զավիրիկի և իրավ. 5-րդ հոսք՝ Իոսիֆ Նիկոլայի Ստեփանովի հետ:

Այս ամենին պարտավորվում եմ լրացնել, որ Սուսաննա Եյնարովկան աթ փետրվարի 9-ին փողոցում կալանավորվել է այս մարդկանց բվում, որոնք խախտել են Սոսկվայի Գեներալ-նահանգապետի 1901 թ. մարտի 17-ի N 73-ի պարտադիր որոշումների 3-րդ կետը և այդ որոշումների 1902 թ. հունվարի 23-ի լրացման նոյն կետը ու ներկայումս գտնվում է կալանքի տակ:

Ամենախոնարի կերպով խնդրում եմ Ձեզ, Հարգելի Պարոն, ընդուներ իմ կատարյալ հարգանքի և անկեղծ նվիրվածության հավաստիքը:

### Զեր խոնարի ծառա

/Սկրուպուրյում/

N 1835

14 փետրվարի 1902 թ.

### Տեղեկան

(Թեր 29)

Քրիստափոր Սկրոտիչը (Նիկոլային) Սիքայելյանցը (Սիքալիանցը) սպանվել է 1905 թ. մարտի 4-ին Սոֆիայի արվարձան-ներում, Կայամելու գյուղում, նոր հնարված ոումբերի փորձարկման ժամանակ (տես. մուտք N N 10467 և 11310 Հատուկ բաժնի 1905թ. N 8 գործի մեջ և N 10842-ում\* գործում մաս 1, 1905 թ.):

\*Այս գործի մասին մանրամասն զեկուցումը (մատ. 10842). զեկուցման համարը 43, 24 մարտի, 1905 թ.:

ապրիլի 6

(Թեր 30)

Սովիայից՝ Լերմոնտովի<sup>36</sup> կողմից,

Ոստիկանության Դեպարտամենտի տօնության 1905 թ. մարտի 11-ին N17826-ով ուղարկված ծածկագիր հեռագրի վերծանումը:

Սպանված հայերը – Դրոշակիստներ են: Մեկը քրիստոնէ Միքայելանցն է, մյուսը բեղջիկ էդուարդ ժորիս<sup>37</sup> կոչվողը, հայանաբար՝ անեղազ է: Սարտի 8-ին Սոֆիայի հայկական կոմիտեի նիստում որոշվել է երեք հազար ծերնառումք տեղափոխել Բաքում և Երզրում. այստեղի իշխանությունների վարքագիծը ավելի քան երկդիմի է:

Ուստան /Ստորագրություն/

(Թերթ 31)

Սովորացից Ուստիկանության Դեպարտամենտի գլուխներ անունով 1905 թ. մարտի 7-ին ուղարկված N 16977 ծածկագիր հեռագրի վերծանումը:

Նշված ումբու քարտու սպանանցությունը գույնով ուղարկեր ծոված են եղել Կոստի Ղարունակուրյունն անընթեռնելի է]: Ուր հատ ուրբար օրը Սոֆիայից՝ Սարաֆովից<sup>38</sup> բնակարանից, տարվել են Կայսարուն, որտեղ երեկ փորձարկումներ էին տեղի ունենում, որոնց հետևեց պայքարներ, սպանվել են դեկավարող մակեդոնացին և ուսուր, որի անձը պարզվում է, situation très compliquée, car— Սարաֆովն այստեղ personna gratissima, հետաքննությունն իրականացնում է Սոֆիայի դատարանի դատախազը, որը մակեդոնացի է<sup>40</sup>:

11264  
9/ IV

Ուստիկանության Դեպարտամենտի վերծանումը

(Թերթ 32)

Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի ղեկավարի անունից «30» մարտի, 1905 թ.

N 654 թ. Թիֆլիս

Կիրակի օրը, սթ մարտի 13-ին, Սուլուկի հայկական եկեղեցում, ժողովրդի հսկայական ներկուքի պայմաններում անց է կացվել հոգեհանգստ՝ արտասահմանում վերջերս մահացած, հայտնի հայ հեղափոխական գործիչ Քրիստովոր Միքայելյանցի համար: Հոգեհանգստի ժամանակ եկեղեցում ցրվում էին հայերեն և վրացերեն լեզուներով հրապարակված Սիորենական հեղափոխական կուսակցության՝ «Դաշնակցության» Արևելյան Բյուրոյի բռուցիկները, սակայն ոստիկանապետին արված իմ հաղորդման հիման վրա այնտեղ ուղարկված ոստիկանության ուժեղացված կարգախմբի դիտարկմամբ՝ փողոցում կարգ ու կանոնի ոչ մի խախտում չեղավ:

Շարադրվածի մասին պատիվ ունեմ հաղորդելու Ձերդ Գերազանցությանը՝ ներկայացնելով բռուցիկի բարգմանությունը:

Ուղարկություն

/Ստորագրություն/

37 Վերջին անուն-ազգանունի տակ տվյալ պարագայում նկատի է առնվում Կռամշապուհ Թենտիրյանի անձը:

38 Այսինքն 41-րդ:

39 Սարաֆով Բրիժ-բուլղար-մակեդոնական շարժման ճանաչված առաջնորդ, հայ ազատամարտի ու 73 Դաշնակցության անկեղծ բարեկամ, որն այդ օրերին գտնվում էր բանտում, իսկ թիզ անց հնըն էլ արժանացավ Թր. Միքայելյանի ճակատագրին: 1907 թվականի դեկտեմբերի 1-ին և 8-ին ՀՅԴ Արևելյան Բյուրոյի պաշտոնարերը «Յատաշին» անվանիդումներից «Կտակը» (Թիֆլիս) տպագրել եք. Սարաֆովի ու նրա հետ միասին զոհված՝ Գարվանովի հուղարկավորության նկարագրությունը: Սոֆիայում տեղի ունեցած հրաժաշտի արարողությանը մանանցում էին ՀՅԴ Արևելյան Բյուրոն մեկայացման Ռուբեն Զարդարյանը և Անդրանիկ Օզանյանը: «Յուզիշ էր Անդրանիկի հրաժեշտը, -գրում է «Կտակը»:- Նա ընկած Սարաֆովի դիակի վրայ, սկզբում համբուրեց իր ընկերոջ ճակատը, ապա շրթումները սեղմած նրա յավիտենապես սառած շրթումներին, երկար, շատ երկար չէր կարողանում բաժանել վիճակակից ժողովողի ազատագրութեան հերթի դիակից:

40 Հեռագրի համարակալում՝ 16997 ապացուցում է, որ իրականում սա է եղել առաջնորդ, քանի նախորդ փաստաթորի համարը 17826 է: Ակնհայտ է նաև, որ առաջնորդ, այսինքն 16997 հեռագրին ուղարկված է ողբերգության անմիջական տպավորության տակ, ուստի հիմնված է զրիվածների անձի նախնական ոչ ճիշտ լուրերի վրա: Սակայն, նրանում առկա են նաև ճշգրիտ տեղեկություններ թ. Սարաֆովի մեծ հեղինակությունից օգտվելով՝ մակեդոնացի թնիչից միջոցով գործ փակելու մասին: Սա կրկին հաստատում է, որ ուս մեծ բանաստեղծ Լերմոնտովի անվան տակ քաքնվող՝ հեռագրի հեղինակը

**Նորին Գերազանցություն՝ Ռարիկա-  
նության հետարրամենիքի տևորենին:**  
(Թերթ 33-34)

### Թարգմանություն վրացերենից

#### Քրիստափոր Միքայելյան

Այսօր հայ հեղափոխական կուսակցություն «Դաշնակցությունը» պատմությանը հանձնեց իր հիմնադիրներից մեկի՝ Քրիստովոր Միքայելյանի անունը: Այդ մարդու ազնիվ սիրտը լցված էր իր բազմաչարչար հայ ժողովրդի հանդեպ անսահման սիրով, նրա ձայնը, վայելելով լիակատար զստահություն, յուրաքանչյուր մարդու սրտում երևան էր բերում մեկ սուրբ մտքով և մեկ ճգումով առաջնորդվելու գաղափարը:

Քրիստովորն իր ողջ ուժը զոհաբերեց իր դժբախտ ժողովրդի ազատության համար պայքարի վեհ գործին: Նա առանց հանգստանալու գործեց այդ մեծ ասպարեզում սուրբ հավատով նայելով ապագային:

Ո՞չ աղքատությունը, ո՞չ անողոր հետապնդումները, ո՞չ բանտի պատերը չկարողացան նրա սրտում կոտրել հոյսը, ոչ երկրային ուժով Միքայելյանը տարավ բոլոր հնարավոր դժվարությունները: Նա իր օրինակով ոգեշնչում էր իր ընկերներին և նոր կազմակորված «Դաշնակցություն» կուսակցության յուրաքանչյուր անդամին, որոնց միջև ստեղծել էր ամոնր կապ և բարձրացրել հեղափոխության սուրբ դրոշը: Քրիստովորը ջանահիրաբար հետևում էր իր կուսակցության հեղինակությանը, աշխատում էր վերջինիս սուրբ անունը պատվանել ամեն ինչից, և իրապես, մինչև նրա կյանքի վերջին վայրկյանը «Դաշնակցության» հիասքանչ դրոշը հպարտորեն ծածանվում էր այդ ազնիվ մարտիկի ձեռքում: Նրա անունը պատվավոր տեղ կգրավի այն անունների կողքին, ովքեր հիմնել

41 Ս. Գևորգ Եկեղեցում 1905թ. մարտի 13-ին վայտերենով տարածված այս թուղթիկում առկա են որոշ անծանություններ. Քր. Միքայելյանը հարել է ոչ թե Ուսասատանի սոցիալ-դեմոկրատական, այլ սոցիալիստ-հեղափոխական, այսինքն՝ նարոդմկան-եւեռական շարժմանը, հայ ուսանողների հետ հանդիպումներ է ունեցել ոչ թե Կ. Սարգսյան, այլ Ֆ. Ենգելսը: Յնապաղով է, որ այս անծանությունները փաստաթուղթը վրացերեն բարգանած անձի անտեղյակության հետևանքն էն: Տեքստում առկա են նաև վրացական լեզվամտածողությանը բնորոշ դարձվածքներ:

են և խոնարհվում են մեծ գործի առջև, ովքեր իրենց կյանքի ընթացքում, ինչպես սուրբ անշեց կանթեղն է լուսավորում պատմության էջերը, լուսավորել են ստրկության մեջ գտնվող ժողովորդների ազատության ճանապարհը, և մահից հետո էլ անմռուաց մնացել իրենց ժողովրդի սրտերում:

«Մեր Քրիստավորը», ինչպես անվանում էին նրան բոլորը, ծնվել է 1859 թ. Երևանի նահանգի Ազգային գյուղում: 70-ական թթ., լինելով Թիֆլիսի Ուսուցչական ինստիտուտի ուսանող, նա միացել է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական շարժմանը: Հայկական դպրոցների փակումը 1884 թ. նրա վրա բողեց ցնցող տպագործություն և միայն այդ ժամանակ նա ուշադրություն դարձրեց հայերի դրության վրա: Այդ նույն տարում Քրիստովորը մեկնեց Մոսկվա և դասախոսություններ լսեց Պետրովսկի Ակադեմիայում: Այնտեղ նա ուշադիր ուսումնասիրում էր քաղաքանատեսությունը, երբ ինքը Մարքսը այդ նույն տարում մասնակցում էր հայ ուսանողների հավաքներին, որոնք հետաքրքրված էին ազգային հարցերով<sup>41</sup>: 1887 թ. Վերադարձավ Կովկաս և միացավ մի փոքրիկ ազգային խմբակի, նրանում կարևոր տեղ գրադեցրեց և դրա հետ միասին դարձավ «Դաշնակցություն» կուսակցության կազմակերպիչը:

1898 թ. աշնանը այդ կուսակցությունը նրան ուղարկեց արտասահման՝ որպես «Դրոշակ» պաշտոնաթերթի խմբագիր և Արևմտյան Բյուրոյի անդամ: Եվլոպայում նա քարոզչություն էր տանում ազգային հարցերի հետ կապված և ստեղծեց հայկական շարժում: Բացի դրանից, Միքայելյանը նաև աշխատեց արտասահմանում Հայ ուսանողական միության կազմակերպմանը:

Միքայելյանը ակտիվ մասնակցություն ուներ «Դաշնակցություն» կուսակցության մեջ կատարվող բոլոր փոփոխություններում և մյուսների համար անհնարինը, նրա համար դառնում էր

վայտերենով տարածված այս թուղթիկում առկա են որոշ անծանություններ. Քր. Միքայելյանը հարել է ոչ թե Ուսասատանի սոցիալ-դեմոկրատական, այլ սոցիալիստ-հեղափոխական, այսինքն՝ նարոդմկան-եւեռական շարժմանը, հայ ուսանողների հետ հանդիպումներ է ունեցել ոչ թե Կ. Սարգսյան, այլ Ֆ. Ենգելսը: Յնապաղով է, որ այս անծանությունները փաստաթուղթը վրացերեն բարգանած անձի անտեղյակության հետևանքն էն: Տեքստում առկա են նաև վրացական լեզվամտածողությանը բնորոշ դարձվածքներ:

հնարավոր: Քրիստովորն աշխատում էր առանց հանգստի, ամենուրեք, որ նա հայտնվում էր, արթնանում էր ընդարձացած ուժը և վերակենդանանում էր հուսահատված սիրոր: Միքայելյանը միավորում էր բոլորին և զարմանալի հմտությամբ տիրոջը դարձնում էր հասարակական գործի ծառա: Քրիստովորը յուրաքանչյուր հավաքի ժամանակ խոնարհման առարկա էր դառնում, այդուհանդերձ, հասարակության այդպիսի մեծարանքները չկարողացան փոխել նրա պարզ և խաղաղ քննավորությունը:

Նրա տունը միշտ բաց էր և մշտապես այցելու ժողովրդով լցված, որը գնում էր այնտեղ այնպես, ինչպես եկեղեցի են գնում աղոթքի: Այո, ինչպես և եկեղեցում, այնտեղ փայլում էր հեղափոխության մշտավառ կանթեղը, քանզի այնտեղ ապրում էր ազատության անհողողդ նվիրյալը, որը խնկարկում էր ազատության սուրբ գաղափարին և այսօր սև հողին է հանձնված նրա աճյունը:

Հայ հեղափոխական կուսակցություն «Դաշնակցությունը» այսօր իր արյունով ներկված դրոշը խոնարհում է նրա քարմ գերեզմանի վրա՝ դրանով արտահայտելով իր սերն ու հարզանքը:

*Ֆեղիրապիկ հեղափոխական  
կուսակցություն «Դաշնակցության»  
Արևելյան Բյուրո:*

*13 մարտի 1905 թ.*

*Շիշկով Է՝ Թիֆլիսի պահանջակա-  
կան բաժնումունքի կողմից*

*Ուղարկում /Արորագրություն/*

**Վերջ**